# ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՆՔԵՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական բարձր տնօրինությամբ մի շարք նոր նշանակումներ են կատարվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Հայաստանի թեմերում և վանքերում:

Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը նշանակվել է Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ: Տ. Վռամ աբեղա Ղազարյանը ծառայության է կոչվել Գուգարաց թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: Տ. Զավեն աբեղա Հակոբյանը նշանակվել է Նորավանքում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: Տ. Պետրոս քահանա Մայիլյանը ծառայության է կոչվել Արարատյան Հայրապետական թեմում՝ առաջնորդական փոխանորդի իշխանության ներքո: Տ. Կորյուն աբեղա Առաքելյանը նշանակվել է Սուրբ Գեղարդավանքում՝ որպես հոգևոր սպասավոր: Տ. Գրիգոր ավագ քահանա Տերտերյանը ծառայության է կոչվել Սուրբ Գայանե վանքում՝ որպես հոգևոր սպասավոր: Տ. Գուրգեն ավագ քահանա Աշուրյանը նշանակվել է Արմավիրի թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո: Տ. Մամբրե աբեղա Տաշչյանը՝ որպես վանահայր, և Տ. Խաչատուր աբեղա Կնյազյանը՝ իբրև հոգևոր սպասավոր, ծառայության են կոչվել Սուրբ Շողակաթ վանքում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*